*Մ. Աբեղյանի հետաքրքրությունների շրջանակում էին թե՛ բանահյուսության գրավոր հուշարձանները, թե՛ կենդանի վիպական բանահյուսությունը:*

*1899–1900 թթ. «Արարատ» ամսագրում հրատարակած «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» աշխատությամբ[31] Աբեղյանը կատարում է վիպական հին բանահյուսական նմուշների ամբողջական հետազոտություն: Հանգամանորեն քննում է Խորենացու օգտագործած տերմինները, ճշգրտում դրանց իմաստային շրջանակը, հանգում եզրակացության, որ Խորենացու գրքով մեզ են հասել բուն առասպելներ և վիպական-պատմական զրույցներ: Նա զուգահեռներ է անցկացնում հայ և ուրիշ ժողովուրդների առասպելական-դիցաբանական երևույթների միջև, անդրադառնում ընդհանուր մոտիվներին: Կատարում է հատուկ անունների ստուգաբանություն, վեր հանում առասպելների պատմական կողմը: Հետազոտության նման մեթոդաբանությամբ Աբեղյանը կարողանում է ներկայացնել քննվող բանահյուսական նմուշների ամբողջական նկարագիրը, ցույց տալ առասպելների կերպափոխումները, բացահայտել առասպելների մեջ առկա հայկական հավատալիքային տարրերը:*

*Խորենացու կողմից «Վիպասանք» բնութագրվող վիպական պատումները Մ. Աբեղյանը դիտարկում է իբրև ամբողջական վեպ՝ այն համարելով «պատմական բանաստեղծություն»՝ պատմություն՝ շաղախված երևակայական, բանահյուսական տարրերով[32]:*

---

[30] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1970, 620:*

[31] *Ա բ ե ղ յ ա ն. 1985, 66–272:*

[32] *Ա բ ե ղ յ ա ն. 1966, 94–95:*

*Գիտնականը ճշգրտում է հայոց առաջին վեպի ղարաշրջանը, պատմական ատաղձը, սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, որոնք նպաստել են այդ գրույցների ստեղծմանը, ցույց է տալիս պատմական անձնավորությունների երբեմն մեկ հավաքական կերպարով հանդես գալը, պատումների հարակցումը պայմանավորում է դրանց գաղափարական բովանդակությամբ. դրանք արտացոլում են թագավորական տոհմի շահերը: Վեպի ծագման հասարակական-քաղաքական շարժառիթների թվում նա հատկապես ընդգծում է կռվող զորքերին հերոսության օրինակներով ոգևորելու հանգամանքը: Քննության նյութ են դառնում վեպի գեղարվեստական առանձնահատկությունները:*

*Առանձնապես մեծ է Մ. Աբեղյանի հետազոտության նշանակությունը խորենացու աղբյուրների ճշգրտման հարցում: Նա հերքում է տարածված վարկածներն առասպելների կեղծ լինելու վերաբերյալ: Աբեղյանը ստեղծում է հայոց առաջին հին վեպի սկզբնավորման և զարգացման տեսությունը:*

*Հայ վիպական բանահյուսության երկրորդ վեպն Աբեղյանը գտնում է Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմությունների վիպական հատվածներում: Հայ Արշակունիների ու պարսից Սասանյանների միջև մի քանի սերունդ տևած և հայոց թագավորության անկումով ավարտվող այդ վեպն Աբեղյանն անվանում է «Պարսից պատերազմ»[33]: Մեթոդաբանական նույն սկզբունքներով է նա քննում երկրորդ վեպը՝ միևնույն ժամանակ բացահայտելով սյուժետային նմանությունները «Վիպասանք»-ի հետ, դրանց առկայության պատճառները: Քննության նյութ են դառնում վեպի թեմատիկան, պատմական ատաղձը, ծագման ժամանակաշրջանը, հասարակական-քաղաքական շարժառիթները, նպատակները, վեպի գեղարվեստական առանձնահատկությունները, շատ պատումների գոյատևելը հայ միջնադարյան պատմիչների երկերում:*

*«Պարսից պատերազմ»-ի տեղայնացված մոտիվները Մ. Աբեղյանը քննում է «Հայ ժողովրդական վեպը» (1906) և «Հայ վիպական բանահյուսություն» (1933–1935) աշխատություններում:*

*Բանավոր վիպական բանահյուսության հետազոտությունն Աբեղյանը սկսում է «Սասնա ծռեր» վեպի ուսումնասիրմամբ: «Դավիթ և Մհեր»-ի առաջաբանում համեմատում է պատումը խորենացու պատմության հին վեպի չափածո հատվածների հետ: «Ազգային վեպ» հետազոտության մեջ (1889–1890)[34] քննում է իր և Սրվանձտյանցի գրի առած պատումների ծագման հնության խնդիրը, պատումների պատմական ու դիցաբանական շերտերը, հերոսներին բնորոշ դյուցազնական-առասպելական հատկանիշները, հայ ժողովրդի՝ վեպի համար աղբյուր հանդիսացած հին ու նոր հավատալիքները:*

*1906–1908 թթ. «Ազգագրական հանդես»-ի մի քանի համարներում լույս է տեսնում Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» խորագրով ընդարձակ ուսումնասիրությունը: Օգտագործելով նախորդ հետազոտողների արդյունքները՝ 15 նոր պատումների հիման վրա զարգացնում է իր կողմից նախկինում առաջ քաշված տեսակետները, հիմնավորում հարցադրումները, կատարում ճշտումներ, անդրադառնում նոր խնդիրների, ինչպիսիք են, օրինակ, վեպի աշխարհագրական տարածվածության, վիպասացների սոցիալական պատկանելության հարցերը: Առավել հանգամանորեն է քննում վեպի ժանրային և գե-*

[33] *Աբեղյան. 1966, 181:*
[34] *Աբեղյան. 1985, 12–65:*

*գարվեստական հատկանիշները՝ կատարելով վեպի ու հեքիաթի զուգադիր համեմատություններ: Պարզում է պատմության հետ վեպի ունեցած հարաբերությունը, մասնավորապես՝ IX դ. կեսերին Սասնա նշանավոր ապստամբության արտացոլումը, բացահայտում է ինքնեանցու պատմության որոշ գրույցների հետ նմանությունները: Աբեղյանը «Սասնա ծռեր»-ը համարում է «Պարսից պատերազմ»-ի կերպափոխությունը, վեպը դիտարկում է իր զարգացման մեջ:*

*«Հայ վիպական բանահյուսություն» աշխատության մեջ[35] Մ. Աբեղյանը մեծ ուշադրություն է դարձնում «Սասնա ծռեր»-ի գեղարվեստական յուրահատկություններին: Ամրագրում է, որ հին վեպերն ու առասպելներն ունեն ընդհանրական հատկանիշ. հայ ժողովրդի դարավոր պայքարի արտացոլումն են ազգային ինքնության, ազատության համար:*

*Այսպես, Աբեղյանը քննում է հին վիպական երգերի զարգացման տարբեր աստիճանները, գրավոր և բանավոր ողջ ժառանգությունը բաժանում է վիպական 5 շրջանների, ստեղծում ժողովրդական վիպերգերի ու վեպերի ծագման ու տիպաբանական զարգացման տեսությունը՝ «որպես հայ վիպա-պատմական բանահյուսության գոյացման ու դարավոր զարգացման մի նորագույն ուսմունք»[36]:*

*1939 թ. Մ. Աբեղյանը հրատարակում է «Մատենագիտություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» ուսումնասիրությունը, որում բնութագրում ու արժևորում է 1874–1939 թթ. լույս տեսած քննական ողջ գրականությունը «Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ:*

*Հայ ժողովրդական քնարական բանահյուսությանը նվիրված առաջին հետազոտությունն Աբեղյանը գրել է 1904 թ.: Այն տպագրվել է նույն թվականին «Արարատ» ամսագրի 2–11-րդ համարներում, ապա՝ լույս տեսել առանձին գրքով Վաղարշապատում (1904), հավելումներով վերահրատարակվել՝ 1940 թ.[37]: Աբեղյանը քննում է դյուցազական սիրո երգերը, դրանց ժանրային նկարագիրը, զարգացումը, գեղջկական կյանքի առօրյայի, բնության երևույթների անդրադարձները դրանցում, հորինվածքային առանձնահատկությունները, փոքր խաղերից ընդարձակ երգերի առաջացման ճանապարհները, ընդգծում է երգերի ազգագրական, ճանաչողական արժեքը:*

*Աբեղյանը հանգամանալից քննության է ենթարկում նաև հին գուսանական-ժողովրդական երգերը (1927–1928)[38]: Պարզում է դրանց հեղինակային պատկանելության հարցը, քննում բանաստեղծական յուրահատկությունները՝ ոտանավորի չափ, տողի ռիթմ, լեզու, հանպատրաստից հորինվածք, նաև ճնշական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են երգերի տարբերակների առկայություն, տների ու տողերի շարժունության, տաղաչարքերի առաջացման հանգամանքներ, կրած փոփոխություններ:*

*Մ. Աբեղյանը գուսանական երգերը համարում է ուրախության, խնջույքի երգեր՝ անդրադառնալով դրանցում արտահայտված աշխարհայեցողությանը, կենցաղային դեպերի արտացոլմանը: Ցույց է տալիս հայրենների և անուշների նույնությունը: Ջուգադրում է հին հայրենները ու նոր ժողովրդական երգերը՝*

---

[35] *Աբեղյան. 1966:*

[36] *Հարությունյան. 1970, 241:*

[37] *Աբեղյան. 1967, 283–383:*

[38] *Աբեղյան. 1967, 11–282:*

*դրանցում տեսնելով նույն մոտիվների, բանաստեղծական պատկերների, հոգեբանության առկայությունը:*

*Աբեղյանի հետաքրքրությունների շրջանակում էին նաև ազգագրական հարցերը: Գերմաներեսում տպագրած «Հայ ժողովրդական հավատալիքը»* («Der armenische Volksglaube») *ուսումնասիրության մեջ[39] նա քննում է հին հայկական դիցաբանական երևույթների առկայությունը հայ ժողովրդական հավատալիքներում, բնութագրում է համայական աղոթքները, համեմատում դրավոր համայիլների հետ: Մ. Աբեղյանը հայ ժողովրդական հավատալիքները քննում է հնդեվրոպական աշխարհի համանման երևույթների համեմատության, համընդհանուր օրինաչափությունների գարգացման շղթայում:*

*Ազգագրական խնդիրներին Աբեղյանն անդրադառնում է նաև տարիներ անց. պատմական վկայությունների վրա հենված հետաքրքիր, նաև բանավիճային տեսակետներ է առաջ քաշում հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ձկնակերպ քարե կոթողների վերաբերյալ 1941 թ. գրած աշխատության մեջ[40]:*

*«Աբեղյանի հետազոտությունների շնորհիվ, – գրում է Ս. Հարությունյանը, – թոթովախոս հայ բանագիտությունը մի քանի տասնամյակի ընթացքում ճեղք է բերում իր բոլոր էական հատկանիշները ... և իր գիտական սիստեմով ու մակարդակով հավասար է դասվում ժամանակի եվրոպական և ռուսական բանագիտության մակարդակին»[41]:*

## Աբեղյանը գրաքննադատ, գրականագիտական հետազոտությունները

*1880-ական թվականներից սկսած՝ Մ. Աբեղյանը քննադատությունը դնում է գիտական բարձր հիմքերի վրա: Նրա համար կարևորվում են քննվող երկերի գաղափարական բովանդակության ու ձևի, արվեստի խնդիրները, ստեղծագործության ազդեցության հարցը հասարակական կյանքի վրա: Այդ հայեցակետով է նա դիտարկում Լեոյի «Կորածներ» վեպը[42]: Ատրպետի «Ինև Կարապետ» վեպի թերությունների անդրադառնալիս գիտականորեն հիմնավորում է իր տեսակետները ռեալիստական գեղագիտության պահանջներով[43]: Աբեղյանն առաջիններից էր, որն արժևորում է Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը: Բարձր է գնահատում բանաստեղծի անդրանիկ ժողովածուի (1890) թեմատիկան, կապը ժողովրդական կյանքի հետ, այդ կյանքի արտացոլման ձևը՝ պարզությունը, կենդանությունը, զգացմունքների բնականությունը, պատկերները վերակերտելու վարպետությունը, գեղեցիկ լեզուն[44]: Աբեղյանը, ինչպես նկատելի է, ընդգծում է Թումանյանի պոեզիային բնորոշ առանձնահատկություններ, որոնք բանաստեղծն ավելի է խորացնում հետագա տարիներին:*

*Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունների անդրանիկ գրքի կապակցությամբ Մ. Աբեղյանը 1891 թ. անդրադառնում է ստեղծագործությունների՝ խրթնաբանությունից զերծ լեզվին, արտահայտչական միջոցներին, ոճին՝ գնահատելով անկեղծ ներշնչանքը՝ որպես հոգեկան վիճակի արտահայտություն[45]:*

---

[39] A b e g h i a n. 1899.

[40] *Ա բ ե ղ յ ա ն. 1975, 103–184:*

[41] *Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. 1970, 275:*

[42] *«Նոր-Դար», 08, 09. XII. 1889:*

[43] *«Նոր-Դար», 12, 13. X. 1889:*

[44] *Ա բ ե ղ յ ա ն. 1975, 361–368:*

[45] *Ա բ ե ղ յ ա ն. 1975, 369–388:*

Հ. Հակոբյանի անդրանիկ գիրքը վերլուծելիս մատնանշում է հատկանիշներ, որոնք զարգացնելը, ըստ Աբեղյանի, նպաստավոր կլինի բանաստեղծի համար[46]:

Երիտասարդ Աբեղյանը դրսևորում է քննադատից պահանջվող անաչառություն և կարողանում է կատարել տեսական բնույթի ընդհանրացումներ: Քննադատի համար կարևորում է եվրոպական գրականագիտության ուսմունքների իմացությունը, և ինքն էլ հետևում է եվրոպական գիտության ձեռքբերումներին: Ապացույցը «Գրական դպրոցներ» ուսումնասիրությունն է (1896–1897)[47]: Այն ամբողջական տեսություն է, ուր Աբեղյանը ներկայացնում է եվրոպական գրական ուղղությունները, դիտարկում է գրականագիտական մի շարք հանգուցային խնդիրներ: Քննության շրջանակում են գեղարվեստական երկի ձևի ու բովանդակության համապատասխանության, գրականության զարգացումը փոփոխությունների, շարժունության մեջ դիտարկելու հարցերը, գրականության և հասարակական կյանքի կապի խնդիրը, գրականության ազգայնության խնդիրը, որով այն առանձնանում է այլ ժողովուրդների գրական ստեղծագործություններից, գրողի անհատականության խնդիրը՝ անձնականի ու հասարակականի փոխհարաբերության տեսանկյունից, մասնավորի և ընդհանուրի հարաբերության խնդիրը:

Տեսական գիտելիքները Մ. Աբեղյանը կիրառում է իր ուսումնասիրություններում: «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմության» աշխատության մեջ (1908–1909 թթ.)[48] քննում է XIX դ. առաջին երեսնամյակի գրաբար գրականությունը, մատնանշում հայ նոր գրականության ձևավորման ընթացքը, զարգացման միտումները: Նա ստեղծագործությունները քննում է գրականության մեջ բերած նորամուծությունների տեսանկյունով, այդ շրջանի բանաստեղծությունը համարում գրաբար և աշխարհաբար գրականությունները կապող միջանցիկ օղակ:

1912 թ. Աբեղյանն անդրադառնում է Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործությանը, դիտարկում նրա բանաստեղծության զարգացման ընթացքը, օրինաչափությունները, ազգային-հասարակական կյանքի ազդակներով պայմանավորված՝ աշխարհայացքի փոփոխությունները, Հովհաննիսյանի ներդրումը բանաստեղծության ձևի ու լեզվի մշակման հարցերում[49]:

Նույն 1912 թ. «Արարատ» ամսագրի էջերում տպագրվում է Աբեղյանի մենագրությունը՝ նվիրված հայոց հին հոգևոր երգերին՝ շարականներին[50], որոնցով սկզբնավորվել է հայ հին պոեզիան: Նրա հետաքրքրությունը բացատրվում է հայ բանաստեղծության ակունքները հասկանալու ցանկությամբ: Աստվածաշնչից սնվող հոգևոր երգերում տեսնում է հունական օրհներգության երկարատև ազդեցությունը, իսկ ինքնատիպ գծերի առկայությունն նկատում է VII դարից՝ պայմանավորված հայ եկեղեցու ծիսական կարգի փոփոխություններով: Աբեղյանը քննում է շարականների գեղարվեստական հատկանիշները,

---

[46] Ա բ ե ղ յ ա ն. 1975, 389–394:

[47] Տե՛ս Ա բ ե ղ յ ա ն. 1975, 185–314:

[48] Ա բ ե ղ յ ա ն. 1970, 545–621:

[49] Ա բ ե ղ յ ա ն. 1975, 340–360:

[50] «Արարատ» (Էջմիածին), 1912, № 7–8, 720–732, № 9, 823–836, № 10–11, 1002–1028, № 12, 1146–1162:

*ձևի ու բովանդակության խնդիրները, տալիս չարականների ժանրի ամփոփ բնութագիրը, բացահայտում է նոր հոգևոր երգերի և հին հեթանոսական օրհներգությունների միջև առկա աղերսները:*

*Մ. Աբեղյանը բացահայտում է նաև հին հոգևոր երգերի ու Գր. Նարեկացու քնարերգության աղերսները: Նշում է Նարեկացու բերած նորությունները թեմատիկ ընդգրկման, նոր ժանրերի, հայկական տաղաչափական նոր ձևերի սկզբնավորման մեջ, հիմնավորում է «Մատյանի» չափածո երկ լինելը՝ ցույց տալով տաղաչափական առանձնահատկությունները: Աբեղյանը վերլուծություններն կատարում է՝ առաջնորդվելով Նարեկացու դարաշրջանի աշխարհայեցությամբ: Նա ուրվագծում է Նարեկացու արվեստի տեսությունը, որի առաջացումը բացատրում է ժամանակի ճարտարապետական արվեստի ծաղկմամբ: Այդ տեսության մեջ մարդու և բնության արժևորման, բանաստեղծի կոչման, անհատական զգացմունքները ընդհանուրի միջով անցկացնելու դրույթներ էին: Անկախ բանավիճային որոշ եզրակացություններից, Աբեղյանի այս հետազոտությունն արժևորվել է իբրև «խոշոր երևույթ հայ գեղագիտական մտքի պատմագրության մեջ»[51], նշվել, որ այն այսօր էլ պահպանում է իր գիտական արժեքը «պատմա-բանասիրական հարցերի իր խոր քննությամբ, Նարեկացու ստեղծագործության իր լայնախոհ լուսաբանմամբ»[52]:*

*Ներկայացրած հարցադրումներով, քննության շրջանակներով գիտական նոր որակ էր նաև Աբեղյանի՝ հայ միջնադարյան առակներին նվիրված ուսումնասիրությունը՝ «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունը նրանց մեջ»[53]: Առաջնորդվելով կուլտուր-պատմական մեթոդով՝ առակները քննում է միջնադարյան Հայաստանի սոցիալ-դասակարգային կյանքի պատկերի հիման վրա՝ դրանցում տեսնելով սոցիալական հարաբերությունների գեղարվեստական արտացոլումները՝ հակամարտություններ ազնվականության ու ռամիկ դասի, քաղաքի և գյուղի միջև, արհեստավորների միջև, արհեստների ու երկրագործության հակադրություն, համքարությունների միջև մրցակցություններ, հոգևորականության հանդեպ ձևավորված ծաղրական, քննադատական վերաբերմունք, ազգամիջյան հարաբերություններ, խառն ամուսնությունների դատապարտում:*

*Աբեղյանի այս ուսումնասիրությամբ արժևորվում են առակները՝ իբրև պատմագեղարվեստական վավերագրեր: Ուսումնասիրության հիմքում ընկած է 1917 թ. Թիֆլիսում կարդացած դասախոսությունը, որն Աբեղյանը լրացնում, խմբագրում և հրատարակում է 1935 թ., բայց շարունակում է աշխատել նյութի վրա՝ «Հայոց հին գրականության պատմություն» հատորում Մ. Գոչի և Վ. Այգեկցու ընդհանրական դիմանկարները շարադրելու նպատակով:*

*Մ. Աբեղյանի գրականագիտական հաջորդ աշխատությունը Մաշտոցի գործի արժևորումն է հայոց գրականության սկզբնավորման ու զարգացման համատեքստում[54]: Վերլուծելով Հայաստանի քաղաքական իրադրությունը IV դ. վերջին, հենվելով Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի վրա՝ կատարում է մի շարք ճշգրտումներ Մաշտոցի անձնավորության, Դանիելյան նշանագրերի, գրերի գյուտի հետ կապված հանգամանքների վերաբերյալ: Աբեղյանը ցույց է տալիս*

---

[51] *Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. 1970, 318:*

[52] *Ղ ա զ ի ն ե ա ն. 1995, 43:*

[53] *Ա բ ե ղ յ ա ն. 1935, 5–52:*

[54] *Ա բ ե ղ յ ա ն. 1941ա, № 1, 47–51, № 2, 41–51:*

*հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների շահերի միասնականությունը հայոց դրեր ստեղծելու հարցում և հանգում եզրակացության, որ մեր գրականության թե՛ առաջին շրջափուլը՝ ավանդական բանահյուսությունը, թե՛ երկրորդ՝ «եկեղեցական, մասամբ ֆեոդալական» շրջափուլը, որ սկսվում է գրավոր դպրության սկզբնավորումով և, ըստ էության, չարունակությունն է «Պարսից պատերազմ» վեպի, առաջադրում են նույն գաղափարը՝ պայքարել ազգային ինքնության պահպանելու համար:*

*Տեսական դիտելիքները, հին և միջնադարյան գրականության նորանոր սկզբնաղբյուրների ուսումնասիրությունն առավել ամբողջական պատկերացում են տալիս Մ. Աբեղյանին հայ հին գրականության զարգացման վերաբերյալ: «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» հետազոտության մեջ (1923) առանձնացնում և գիտականորեն բնութագրում է հայ հին գրականության զարգացման շրջափուլերը, առանձնացնում յուրաքանչյուրի որակական հատկանիշները, թափանցում է քննվող դարաշրջանների մեջ, արձանագրում հասարակական կյանքում և մարդկանց գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և դրանց ազդեցությունները մատենագիրների գեղագիտական հայացքների վրա:*

*Ակադեմիկոս Ս. Սարինյանն իրավացիորեն նկատել է, որ Աբեղյանը, քաջածանոթ լինելով նախորդ ուսումնասիրողների հին գրականության պարբերացման փորձերին, կիրառում է մեթոդաբանական բոլորովին նոր սկզբունք, որով «համատեղում է պատմությունը, բանասիրությունն ու տեսական-փիլիսոփայական մեկնությունը»[55]:*

*«Վերածնությունը հայ հին գրականության մեջ» (1941) հետազոտությունում[56] Մ. Աբեղյանը գիտականորեն հիմնավորում է գրականության նորոգման իր տեսությունը՝ անդրադառնալով XVII–XIX դդ. գրականությանը: Հին գրականության զարգացումը դիտարկում է միջնադարյան քրիստոնեական գրականության զարգացման ընդհանուր օրինաչափություններ մեջ: Նա ինքնատիպ երևույթ է համարում հայկական վերածնությունը, որը միտված է դեպի հեթանոսական աշխարհիկ ոգին ու կյանքը և ոչ թե անտիկ հունահռոմեական կուլտուրան:*

*Երկու տարի անց Աբեղյանը նորից է անդրադառնում վերածնության իր տեսությանը՝ գրելով «Կյանքի և աշխարհայեցության փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնության շրջանի» հետազոտությունը[57]: Նա քննում է հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, նոր դասակարգի՝ քաղաքացիության առաջացումը, բարքերի փոփոխությունները, աղանդավորական շարժումները և այդ ամենի ազդեցությունը գրականության վրա:*

*1944 թ. տպագրած «Հովհաննես Սարկավագ վարդապետ» հետազոտության մեջ[58] Մ. Աբեղյանը հանգամանորեն վերլուծում է Սարկավագի գեղագիտական տեսությունն արվեստի ծագման մասին, գնահատում նրան իբրև հայրենասիրական գաղափարախոսության սկզբնավորողի, ով հայ գրականության մեջ արծարծում է հայրենիքում մնալու, համախմբվելու թեման: Նա*

[55] *Ս ա ր ի ն յ ա ն. 2004, 198:*
[56] *Ա բ ե ղ յ ա ն. 1941բ, 85–106:*
[57] *Ա բ ե ղ յ ա ն. 1943, 39–52:*
[58] *Ա բ ե ղ յ ա ն. 1944բ, 31–60:*

*Սարկավագին համարում է հայկական վերածննդության նոր մտավոր հոսանքի ներկայացուցիչ[59]:*

*Հայ հին գրականության պատմության օրինաչափությունները դիտարկելուց, զարգացման շրջանները տարբերակելուց հետո Աբեղյանը սկսում է «Հայոց հին գրականության պատմության» շարադրումը[60]: Դժվարությունները ու խնդիրները բազում էին: Դրանց Աբեղյանն անդրադառնում է աշխատության I հատորի առաջաբանում: Սակավ էին հրատարակված գիտական բնագրերը, գիտական հետազոտությունները, չկային հայոց պատմությանը նվիրված ուսումնասիրություններ՝ դարաշրջանների սոցիալ-քաղաքական կյանքի պատկերներով, գաղափարախոսություններով, անհրաժեշտություն էր եկեղեցական պատմության իմացությունը, ինչպես նաև՝ նյութի համակարգման, ուսումնասիրության մեթոդաբանության, հայ հին գրականության հետազոտության առարկայի հստակեցումը: Մ. Աբեղյանը որոշակի փոփոխություններ է կատարում հին գրականության պարբերացման իր տեսության մեջ՝ զարգացնելով Մաշտոցի գործի քննության ժամանակ արտահայտած իր տեսակետները:*

*Առասպելապատմական շրջանի ուսումնասիրություններից հետո Աբեղյանի քննության առարկան են դառնում թարգմանական գրականությունը, վկայաբանությունները, դավանաբանական պայքարի գրականությունը: Պատմագրությունը, որը նա բաժանում է 5 շրջանի, համարում է հին գրականության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Յուրաքանչյուր երկին անդրադառնալիս կատարում է ճշգրտումներ հեղինակի, գրության ժամանակի, երկի աղբյուրների հետ կապված հարցերում: Անդրադառնում է երկը ստեղծելու շարժառիթներին, գաղափարական բովանդակությանն ու գեղարվեստական առանձնահատկություններին, հորինելու եղանակներին, պատմիչի կերպարին, սոցիալ-պատմական իրականությունը վերլուծության ենթարկելու նրա հմտություններին, երկի աղբյուրագիտական նշանակությանը, ընդհանուր պատմագիտական արժեքին, քանի որ նրանում երբեմն տեղեկություններ են հանդիպում ուրիշ ժողովուրդների հետ ունեցած ռազմաքաղաքական հարաբերությունների մասին:*

*Բանաստեղծների ստեղծագործությունները քննելիս ևս Մ. Աբեղյանը կարևորում է հասարակական կյանքի ազդակները, բացահայտում է բանաստեղծների աշխարհայացքը, գեղագիտական ըմբռնումները, նրանց անհատական խառնվածքով բացատրում ստեղծագործությունների հորինվածքային, ոճական առանձնահատկությունները: Ջուգահեռներ է անցկացնում նախորդ շրջանի բանաստեղծների հետ, գնահատում նորարարությունը, տալիս գրական նոր տեսակների ժանրային բնութագիրը: Քննության շրջանակում Աբեղյանն ընդգծում է ուսումնասիրվող հեղինակի ինքնատիպությունը, ազգային ոգին՝ դիտարկելով նրա ստեղծագործությունը համաշխարհային գրականության համապատկերում:*

*Մեծարժեք բացահայտումներ են Աբեղյանի աշխատության մեջ սոցիալական հակամարտություններին նվիրված անդրադարձները, հավելվածներում ներկայացված բանասիրական ճշգրտումները, երևույթներին տրված գնահատականները:*

---

[59] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1970, 354:*

[60] *Հայոց հին գրականության պատմություն. 1944 թ, գիրք I, Հայոց հին գրականության պատմություն. 1946, գիրք II:*

*«Հայոց հին գրականության պատմության» մեջ արտացոլված է հին ու միջնադարյան Հայաստանի կյանքը՝ ներքին ու արտաքին պայքարներով, ընդգծվում է հայոց հին գրականության ազգային բնույթն ու բովանդակությունը: Դա նկատելի է ոչ միայն գրականության զարգացման շրջափուլերին տրված բնութագրումներում, այլև առանձին ստեղծագործությունների գնահատականներում[61]:*

*Աչխատությունը համարվել է «իր նախորդը չունեցող գրականագիտական մի մոնումենտալ ստեղծագործություն»՝ իր ընդգրկմամբ, իր պատմականությամբ, գրական հուշարձանների գեղարվեստական վերլուծությամբ[62], համարվել է «հայ պատմագրության խոշոր նվաճումը, որը մի շարք կողմերով այսօր իսկ մնում է չգերազանցված»[63]:*

## Աբեղյանի տաղաչափական ուսումնասիրությունները

*Մ. Աբեղյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում տաղաչափության հարցերին դեռևս «Դավիթ և Մհեր» պատումը ուսումնասիրելիս, ապա ժողովրդական խաղիկների ու հայրենների բանաստեղծական ձևերը, Նարեկացու Մատյանը, Տերյանի, Զարենցի բանաստեղծությունները քննելիս: Հետագայում անդրադառնում է «Շահնամայի» ոտանավորի չափին[64]:*

*«Հայերեն տաղաչափության մասին» հոդվածաշարում (1916)[65] Աբեղյանը հիմնավորում է տարբեր առիթներով առաջ քաշած իր տեսությունը հայերենի տաղաչափության չեչտական լինելու մասին ու եզրակացնում, որ հայերենը միջին տեղ է գրավում ռուսերեն և ֆրանսերեն ոտանավորների մեջ, ֆրանսերենից ավելի ռիթմիկ է[66]:*

*Աբեղյանը քննում է նաև սովետահայ բանաստեղծության տաղաչափական ձևերի յուրահատկությունները (1923)[67]: Անդրադառնում է Տերյանի կիրառած անապեստյան ոտանավորին, Աբովի, Վշտունու կիրառած բանաստեղծական ձևերին, հայ տաղաչափության զարգացման գործում Զարենցի կատարած դերին:*

*Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատությունը (1933)[68] համակարգված ուսումնասիրություն է, որում սահմանվում են ուսումնասիրության առարկան, խնդիրները, ի մի է բերվում ամբողջական նյութը, դիտարկվում զարգացման ընթացքը, նշվում են փոփոխությունները: Ըստ Աբեղյանի՝ թեև տաղաչափությունը լեզվական ուսումնասիրություն է, սակայն այն սերտորեն կապված է գրականության, գրականագիտության հետ և, առհասարակ, կարևոր նախապայման է գրականության պատմությունը հետազոտելու համար:*

[61] Ն ե ր ս ի ս յ ա ն. 1990, 92:
[62] Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն. 2009, 313:
[63] Մ ա ր ի ն յ ա ն. 1988, 49:
[64] Ա բ ե ղ յ ա ն. 1934, 117–128:
[65] Ա բ ե ղ յ ա ն. 1971, 385–411:
[66] Ա բ ե ղ յ ա ն. 1971, 410:
[67] Ա բ ե ղ յ ա ն. 1971, 412–446
[68] Ա բ ե ղ յ ա ն. 1971:

*Աբեղյանի չնորհիվ շրջանառվում են նոր եզրույթներ ու հասկացութ յուններ, որոնք դառնում են այն հիմքը, որի վրա «XX դարում իր հետագա զարգացումն ապրեց հայկական ոտանավորի ուսումնասիրութ յունը»[69]:*

*Վերանայելով իր նախորդ՝ «Դավիթ և Մհեր» (1889), «Ժողովրդական խաղեր, ուսվածք» (1904) ուսումնասիրութ յունների եզրակացութ յունը՝ Աբեղյանը հայկական ոտանավորի հիմնական տեսակ համարում է ոչ թե վանկականը, այլ չեչտականը՝ մոտ գերմանականին և ռուսականին: Տեսակետը համարվում է վիճելի[70]. տարիներ անց Էդ. Ջրբաշյանը, գրում է, որ գիտնականի գործածած «չեչտական» տերմինը իր բովանդակութ յամբ համապատասխանում է ժամանակակից գրականագիտութ յան «վանկաչեչտական» տերմինին[71]:*

*Աբեղյանի աշխատութ յունն աչքի է ընկնում հակայական նյութի ընդգրկմամբ, գիտական համակարգվածութ յամբ: Նա դնում է տիպաբանական տաղագիտութ յան հիմքը, դառնում «Հայ տաղաչափութ յան՝ իբրև մեր բանասիրութ յան մի առանձին ճյուղի իսկական հիմնադիրը, նրա առանձնահատկութ յունների և օրինաչափութ յունների բացահայտողը»[72]:*

## Մանուկ Աբեղյանի լեզվաբանական հետազոտութ յունները

*Լեզվի զարգացման ընթացքը Աբեղյանը դիտում է իբրև պատմական գործընթաց, լեզվաբանութ յունը՝ պատմական գիտութ յուն, քանի որ լեզուն անընդհատ փոփոխվում է: Նա դառնում է երիտքերականների դպրոցի հիմնադիր ներկայացուցիչը հայ լեզվաբանութ յան պատմութ յան մեջ՝ առաջ քաշելով լեզվի հոգեբանական կողմի ուսումնասիրութ յան անհրաժեշտութ յունը:*

*Կարևորելով նախևառաջ աշխարհաբարի քերականութ յան իմացութ յունը՝ Մ. Աբեղյանը 1906 թ. հրատարակում է դպրոցի ցածր դասարանների համար նախատեսված «Աշխարհաբարի քերականութ յուն» հետազոտութ յունը՝ ցույց տալով, որ հայերենի քերականագիտական համակարգը բոլորովին էլ օտար քերականութ յունների ընդօրինակութ յուն չէ: Նա հայերենի քերականութ յունը բաժանում է 3 բաժնի՝ հնչյունաբանութ յուն, բառագիտութ յուն, շարահյուսութ յուն: Խոսքի մասերի նոր համակարգում դիխավոր տեղը հատկացնում է բային, որի համար ներմուծում է միջնաձանցներ հասկացութ յունը, համակարգում, լրացնում է եղանակային կարգերը, խոնարհման հարացույցում ճշգրտում է ժամանակի հասկացութ յունները, հստակեցնում է դերբայի ըմբռնումը, կերպի հասկացութ յունը: Առանձին ձև չունենալու պատճառով չի ընդունում սեռական և հայցական հոլովները: Քննում է լեզվի փոփոխութ յան ճանապարհները: Եզրակացնում է, որ լեզվի պատմութ յունը կապված է այդ լեզվով խոսող ազգի պատմութ յան հետ, և լեզվաբանութ յունը կարողանում է բացատրել պատմական շատ իրողութ յուններ:*

*Աբեղյանը կարևորում է լեզվի վիճակները զարգացման զանազան շրջաններում ուսումնասիրելու խնդիրը, նկարագրական քերականութ յունների ստեղծումը: Լեզվական երևույթները քննում է հարուստ փաստական նյութի հիման վրա, հայ գրականութ յունից բերած բազմաթիվ օրինակներով:*

---

[69] Ջ ր բ ա շ յ ա ն. 2023, 294:
[70] Տե՛ս Ջ ր բ ա շ յ ա ն. 2023, 299–304:
[71] Ջ ր բ ա շ յ ա ն. 1968, 89:
[72] Ջ ր բ ա շ յ ա ն. 1968, 85:

*«Աշխարհաբարի քերականության» մեջ արծարծված չատ հարցեր Մ. Աբեղյանը շարունակում է քննել նոր աշխատություններում՝ «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909), «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» (1912), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912), «Հայոց լեզվի տեսություն» (1931):*

*Սեռական և հայցական հոլովների հարցում իր տեսակետները հիմնավորելու համար կատարում է քննվող հոլովաձևերի ստուգաբանական վերլուծություն: Ցույց տալով գրաբարում սեռական և տրական հոլովաձևերի աստիճանական զարգացումը՝ պարզաբանում է, որ սեռականը տրական հոլովի գործածության մի ձևն է[73]:*

*Բայի եղանակային կարգը քննում է հնդեվրոպական մի քանի հին ու նոր լեզուների համեմատությամբ: Տարբերակում է ըղձական, հարկադրական եղանակները, բացատրում պիտի և կը եղանակիչների ծագումը, հատակեցնում հրամայական եղանակի կիրառության հնարավորությունները[74]:*

*Շարահյուսության քննության առարկան համարում է բառերի պաշտոնը և ուսումնասիրում բառերի հարաբերությունները ու կապակցության ձևերը: Նախադասության բոլոր անդամները, այդ թվում՝ ենթական, ստորադասում է բային: Քննում է բայասեռերի հասկացությունը, մշակում է պարագայական համակարգը: Ուսումնասիրում է նախադասության տեսակները, բաղադրիչ նախադասությունների հարաբերությունները, նախադասությունը պարզեցնելու, ուղղակի խոսքն անուղղակիի վերածելու կանոնները: Սահմանում է կետադրության կանոնները[75]:*

*Գրաբարի քերականության իմացությունը Մ. Աբեղյանը համարում է մեր հին լեզուն հասկանալու լավագույն միջոցներից մեկը, գրաբարը դիտարկում է որպես աշխարհաբարի ուսուցման օժանդակ մաս: «Գրաբարի համառոտ քերականության» մեջ (1907)[76] նա նշում է գրաբարի ու աշխարհաբարի բառապաշարի և բառակազմության գրեթե նույնությունը, կանգ է առնում գրաբարի խոնարհման, հոլովման այնպիսի կանոնների վրա, որոնք աշխարհաբարում հազվադեպ են:*

*Աբեղյանը տարիների ընթացքում խորացնում, երբեմն վերամշակում, լրացնում է իր ուսմունքները հնչյունաբանական, իմաստաբանական, բառակազմական, ձևաբանական համակարգերի շուրջ՝ այդ ամենն ամփոփելով «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ[77]: Նա կիրառում է հետազոտության պատմահամեմատական մեթոդը՝ քննվող հասկացությունները դիտարկելով գրաբարի և միջին հայերենի համեմատությամբ: Մ. Աբեղյանը կատարում է հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունների գիտական դասակարգում, անդրադառնում արտաբերության առանձնահատկություններին, բնութագրում բաղաձայնների տեսակները, բացահայտում հնչյունների բառակազմական դերը, քննում զարգացման ճանապարհին կրած փոփոխությունները: Դասակար-*

---

[73] Աբեղյան. 1974, 247–277, 666–667:
[74] Աբեղյան. 1974, 243–271:
[75] Աբեղյան. 1974, 293–561:
[76] Աբեղյան. 1974, 710–822:
[77] Աբեղյան. 1974, 7–288:

*գում է բառերն ըստ նշանակության, ցույց տալիս հատուկ անունների տարբերակիչ հատկանիշները հասարակ անուններից, բացատրում բառերի իմաստափոխության պատճառները, իմաստափոխված բառերի կամ բառակապակցությունների տեսակները: Մշակում է բառաբարդության կանոնները, դրանք բացատրում պատմական իրողություններով: Քննում է բայական եղանակների, եղանակավորող մասնիկների, հոլովների ծագման ու զարգացման և բայի ժամանակների ու հոլովական ձևերի տիպաբանական դասակարգման հարցերը:*

*Մ. Աբեղյանն ուսումնասիրում է լեզվաբանական իրողությունները դրանց բոլոր առանձնահատկությունների վերհանումով, ստեղծում է «աշխարհաբարի գիտական, խոր ուսումնասիրության անցուգական կոթողներ, որոնք և՛ գիտական-տեսական բարձր մակարդակով, և՛ նյութի բազմակողմանի ընդգրկմամբ ու վերլուծությամբ մինչև օրս էլ մնում են անգերազանցելի»[78]:*

## Մանուկ Աբեղյանի վաստակը բառարանագրության ասպարեզում

*Հայոց լեզուն իր զարգացման բոլոր փուլերում խորապես ուսումնասիրած գիտնականը մեծ ներդրում է ունենում նաև բառարանների ստեղծման աշխատանքներում: Նա աշխատանքներ է կատարում բացատրական բառարաններ ստեղծելու ուղղությամբ: 1891 թ. կազմում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի բառարանը, 1907 թ.՝ Պ. Պռոշյանի «Կովածաղիկ» վեպի բառերի ու դարձվածների բառարանը՝ համապատասխան օրինակներով: Սակայն 1918 թ., երբ Հայաստանում պետական պաշտոնավարության է հայերենով, հրատապ է դառնում իրավաբանական, ռազմական տերմինների բառարանների ստեղծումը: Մ. Աբեղյանին հրավիրում են աշխատելու «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան»-ի վրա, որը լույս է տեսնում 1919 թ.: Մոտ 1400 բառական միավորներից շատերը սկսում են շրջանառվել մասնագիտական տերմինաբանության մեջ: Բառարանը կազմողները՝ Մ. Աբեղյանը, Տ. Հովհաննիսյանը, Ստ. Մալխասյանցը և ուրիշներ, բառապաշարը հարստացրել էին՝ վերափոխելով հին տերմինների իմաստները, ստեղծելով նոր բառեր, փոխառելով եվրոպական լեզուներում առկա տերմիններ: Սկզբունք էր ընդունվել յուրաքանչյուր ռուսերեն տերմինին համապատասխանեցնել հայերեն մեկ տերմին՝ ձգտելով հասկացությունների որոշակիացմանը, հստակեցմանը:*

*Մ. Աբեղյանը դառնում է նաև ռազմական տերմինաբանության թարգմանիչն ու մշակողը: Նրա կազմած ու 1927 թ. հրատարակած «Ռուս-հայերեն ռազմական բառարան»-ը պարունակում է 17.000 բառ ու կապակցություն: Բառարանը կազմելու համար Աբեղյանն ուսումնասիրում է ռազմական տարբեր ձեռնարկներ ու դրքեր, ֆրանսերեն-ռուսերեն ռազմական բառարան, ռազմական ու ծովային գործին նվիրված հանրագիտարան՝ 8 հատորով: Շատ տերմիններ նա ստեղծում է նախորդ բառարանում կիրառած սկզբունքներով:*

*Աբեղյանը մասնակցել է նաև Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի կողմից երկաթուղային տերմինների բառարանի կազմման աշխատանքներին (1927): Լ. Հովհաննիսյանի և Ս. Տեր-Պողոսյանի հետ կազմել է «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան»-ը (20.000 միավոր): Կյանքի վերջին տարիներին Մ.*

[78] *Ա ս ա տ ր յ ա ն. 2023, 59:*

*Աբեղյանը չի կարողացել կատարել բառարանի խմբագրական աշխատանքները: Այն լույս է տեսել 1951 թ., սակայն, ի տարբերություն իրավաբանական և ռազմական բառարանների, տարածում չի գտել: Չի հրատարակվել Դ. Դեմիրճյանի և Գ. Լևոնյանի հետ կազմած «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարանը»: 2000 բառային միավորներից չատերը եղել են նորաստեղծ կազմություններ:*

*Եթե նկատի ունենանք նաև Աբեղյանի կազմած բառարանները՝ կցված իր հրատարակած բնագրերին, ապա ակնհայտ կդառնա, թե որքան հետամուտ է եղել գիտնականը հայոց լեզվի բառապաշարը նոր բառերով, մասնագիտական տերմիններով հարստացնելուն, լեզվի ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտը լայնորեն և նպատակային կիրառելուն: Մ. Աբեղյանի կազմած բառարանները համարվում են «գիտական ծանրակշիռ ավանդ հայ բառարանագրության, ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման, տերմինաբանության զարգացման ասպարեզում»[79]:*

## Եզրակացություն

*Ականավոր գիտնական Մ. Աբեղյանն իր գործունեությունը սկսել է XIX դ. 80-ական թվականներին, երբ հայ ժողովուրդը դեռևս չէր ճանաչում սերունդների՝ իրեն կտակած հոգևոր հարստությունը: Նա մեկն էր ժամանակի մտավորականներից, որը, առաջադրելով հայ ժողովրդի հոգևոր ինքնության սկիզբը բացահայտելու խնդիրը, սկսեց ոչ միայն հավաքել, հրատարակել բանավոր ու գրավոր բացառիկ արժեքները՝ լրացնելով, ամբողջացնելով քննական բնագրեր կազմելու գիտական սկզբունքները, այլև ուսումնասիրել հազարամյա հարստությունը՝ ժամանակի եվրոպական գիտության չափանիշներին համարժեք մեթոդաբանությամբ:*

*Իր ազգային-հասարակական, մանկավարժական գործունեությամբ և գիտական պատկառելի ժառանգությամբ Աբեղյանը մեծապես նպաստել է հայոց ակադեմիայի հիմնադրման գործին: Հայ ժողովրդական բանահյուսությանը, հայ հին ու նոր գրականության պատմությանը, հայոց լեզվի քերականությանը, հայոց լեզվի տաղաչափությանը վերաբերող նրա հետազոտությունները, որոնք աչքի են ընկնում կուռ տրամաբանությամբ, համակարգված մտածողությամբ, հայեցակարգային դիտարկումներով ու բանաձևումներով, գիտության նվաճումներին տեղյակ լինելու, եզրահանգումներ կատարելու համար ստուգված փաստական աղբյուրներ ունենալու պահանջներով, ճևավորել են այն բարձր մեկնակետը, որից սկիզբ է առնում ակադեմիական գիտության զարգացումը:*

*Մ. Աբեղյանի ուսումնասիրություններն առ այսօր արդիական են՝ ընդունելի կամ վիճահարույց դրույթներով հանդերձ, քանի որ լայն են գիտական ընդգրկումները, վերլուծությունները՝ համակողմանի՝ դիտարկված ժամանակի համաշխարհային գիտության ընդհանուր համատեքստում:*

---

[79] *Ա բ ա ջ յ ա ն. 2023, 162:*

**Հերիքնազ Որսկանյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ դասական գրականություն: Հեղինակ է 1 մենագրության և 35 հոդվածի:**
ORCID: 0000-0001-6682-4043. vorskanyan@litinst.sci.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբաջյան Ա. 2023, Մանուկ Աբեղյանը բառարանագիր. – Հուշարձան Մանուկ Աբեղյանին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 155–163:

Աբեղեան Մ. 1897, Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը. – «Արարատ» (էջմիածին), № 9–10, էջ 424–431:

Աբեղեան Մ. 1899, Գէորգ Դ. մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց. Համառօտ կենսագրութիւն, Վաղարշապատ, տպ. Սբ էջմիածնի, 92 էջ:

Աբեղեան Մ. 1906, Հայ ժողովրդական վէպը. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), գիրք XIII, № 1, էջ 5–36, գիրք XIV, № 2, էջ 39–68, 1907, գիրք XV, էջ 5–52, գիրք XVI, էջ 69–117, 1908, գիրք XVII, № 1, էջ 5–36, գիրք XVIII, № 2, էջ 5–24:

Աբեղյան Մ. 1912, Ուրվագծեր հայոց գրականության պատմությունից. Շարականների մասին.– «Արարատ», № 7–8, էջ 720–732, № 9, էջ 823–836, № 10–11, էջ 1002–1028, № 12, էջ 1146–1162:

Աբեղեան Մ. 1916, Ս. Գրիգոր Նարեկացի. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), գիրք XXVI, էջ 85–136:

Աբեղյան Մ. 1923, Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության (դասընթաց Երևանի ժող. համալսարանի 1921–1922 ճեմ. տարվա), Երևան, Պետհրատ, (Ա–Բ) + 68 էջ:

Աբեղյան Մ. 1934, «Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ. – «Ֆիրդուսի». բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Երևան, Պետհրատ, էջ 117–128:

Աբեղյան Մ. 1935, Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ.– «ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», հ. 1, էջ 5–52:

Աբեղյան Մ. 1940, «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» (ուրախության, սիրո, հարսանիքի, օրորոցի, լացի), Երևան, Արմֆանի հրատ., 340 էջ:

Աբեղյան Մ. 1941ա, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը.– «Սովետական գրականություն» (Երևան), № 1, էջ 47–51, № 2, էջ 41–51:

Աբեղյան Մ. 1941բ, Վերածնությունը հայ հին գրականության մեջ.– «ՍՍՌՄ գիտ. ակադ. Հայկ. ֆիլիալի Տեղեկագիր», № 5–6, էջ 85–106:

Աբեղյան Մ. 1943, Կյանքի և աշխարհայեցության փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնության շրջանի.– «ՍՍՌՄ գիտ. ակադ. Հայկ. ֆիլիալի Տեղեկագիր, հասարակ. գիտություններ», № 1, էջ 39–52:

Աբեղյան Մ. 1944ա, Հովհաննես Սարկավագ վարդապետ.– «ՀՍՍՌ ԳԱ հասարակ. գիտ. Տեղեկագիր», № 1–2, էջ 31–60:

Աբեղյան Մ. 1944բ, Հայոց հին գրականության պատմություն. գիրք I, Սկզբից մինչև X դար, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 647 էջ:

Աբեղյան Մ. 1946, Հայոց հին գրականության պատմություն. գիրք II, XI–XIX դարի 30-ական թթ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 599 էջ:

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, հատորի խմբագրությունը, նախաբանը և ծանոթագրությունները Ա. Ղանալանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., (Ա–ԻԴ)+571 էջ:

Աբեղյան Մ. 1967, Երկեր, հ. Բ, հատորը կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 388 էջ:

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, հատորը հրատարակության պատրաստեց և խմբագրեց էմ. Պիվազյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 694 էջ:

Աբեղյան Մ. 1970, Երկեր, հ. Դ, հատորը հրատարակության պատրաստեց և խմբագրեց էմ. Պիվազյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:

Աբեղյան Մ. 1971, Երկեր, հ. Ե, տեքստը պատրաստեց՝ Ե. Բաստրմաջյան, հատորի խմբագրությունը և ծանոթագրությունները էդ. Զրբաշյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 512 էջ:

Աբեղյան Մ. 1974, Երկեր, հ. Զ, հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Պ. Շարաբխանյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 848 էջ:

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. է, հատորը կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ս. Հարությունյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 604 էջ:

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, հատորը տպագրության պատրաստեցին՝ Հ. Աբեղյան, Պ. Հակոբյան, Ս. Հարությունյան, Ս. Կոստանյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 672 էջ:

Ասատրյան Մ. 2023 Հայ լեզվաբանության անզուգական կոթողը. – Հուշարձան Մանուկ Աբեղյանին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 59–61:

Ավդալբեկյան Մ. 2009, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, «Գասպրինտ» հրատ., 344 էջ:

Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհէրի դուռ. 1874, տպ.՝ Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, տպ. Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ:

Դոլուխանյան Ա. 2023, Հայ միջնադարյան գրականության ու հայ բանագիտության չգերազանցված համակարգողը. – Հուշարձան Մանուկ Աբեղյանին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 215–219:

Զաքարյան Ա. 2012, Մանուկ Աբեղյանի ուշագրավ հոդվածը.–ՊԲՀ, № 2, էջ 240–245:

Զաքարյան Ա. 2013, Մանուկ Աբեղյանը հայ-վրացական հարաբերությունների մասին.– ՊԲՀ, № 1, էջ 197-217:

Զաքարյան Ա. 2013, Մանուկ Աբեղյանի ելույթը գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստում.– ՊԲՀ, № 2, էջ 3–12:

Էջեր Մանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից. 2013, կազմ., առաջաբանը և ծանոթագր.՝ Անուշավան Զաքարյանի, Երևան, «Գիտություն» հրատ., 103 էջ:

«Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 04, 05, 06, 14, 15, 19, 21, 28. IX. 1918, 02, 05. X. 1918:

Կորյուն. 1914, Վարք Մաշտոցի, Երևան, Հայպետհրատ, 126 էջ:

Հարությունյան Ս. 1970, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:

Հարությունյան Ս., Պողոսյան Ա. 2015, Մանուկ Աբեղյան. կենսամատենագիտական ակնարկ և մատենագիտություն.– ՊԲՀ, № 1, էջ 92–127:

«Հորիզոն» (Թիֆլիս), 17. VI. 1910:

Ղազինեան Ա. 1995, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս–Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 264 էջ:

«Մարտակոչ» (Թիֆլիս), 12, 13. I. 1924:

Մնացականյան Ե. 2023, Մ. Աբեղյանի «Մեր դպրոցական կյանքից» հոդվածաշարը և նրա արդիական հնչեղությունը. – Հուշարձան Մանուկ Աբեղյանին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 252–260:

Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913, աշխատությամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 560 էջ:

Ներսիսյան Վ. 1990, Մանուկ Աբեղյանը և հայոց հին գրականության ազգային յուրահատկության հարցը.– ՊԲՀ, № 1, էջ 88–94:

«Նոր-Դար» (Թիֆլիս), 12, 13. X. 1889, 28. XI. 1889, 08, 09. XII. 1889,14. VI. 1891, 31. I. 1906, 02, 03, 04, 05, 07, 08. II. 1906:

Զրբաշյան էդ. 1968, Աբեղյանը և հայկական տաղաչափության ուսումնասիրության հարցերը.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 80–93:

Զրբաշյան Ա. 2023, Մանուկ Աբեղյանի դերը հայ տաղագիտության մեջ. Աբեղյանի տեսության քննադատությունը.– Հուշարձան Մանուկ Աբեղյանին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 292–305:

Սարինյան Ս. 1988, Հայոց գրականության երկու դարը, գիրք առաջին, Երևան, «Սովետական գրող» հրատ., 536 էջ:

Սարինյան Ս. 2004, Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 636 էջ:

Корюн.1962, Житие Маштоца, перевод Ш. В. Смбатяна и К. А. Мелик-Оганджаняна. Ереван, Айпетрат, 164 с.

Abeghian M. 1899, Der Armenische Volksglaube. Leipzig, Druck von W. Drugulin, 127 s.

Koriwn. 1964, The life of Maschtots. translated by Bedros Norehad (կից գրաբար բնագրով). New York, Armenian General Benelovent Union of America, 96 p.

## REFERENCES

Abajyan A.2023, Manuk Abeghyany bararanagir. – Hushardzan Manuk Abeghyanin, Yerevan, YePH hrat., ej 155–163 (In Armenian).

Abeghean M. 1897, Mer yerku grakan lezui miut'ean khndiry.– «Ararat» (Ejmiatsin), № 9–10, ej 424–431 (In Armenian).

Abeghean M. 1899, Georg D.metsagorts kat'voghikos amenayn hayots'.Hamarot kensagrut'iwn, Vagharshapat, tp. Sb Ejmiatsni, 92 ej (In Armenian).

Abeghean M. 1906, Hay zhoghovrdakan vepy. – «Azgagrakan handes» (T'iflis), girk' XIII, № 1, ej 5–36, girk' XIV, № 2, ej 39–68, 1907, girk' XV, ej 5–52, girk' XVI, ej 69–117, 1908, girk' XVII, № 1, ej 5–36, girk' XVIII, № 2, ej 5–24 (In Armenian).

Abeghyan M.1912, Urvagtser hayots' grakanut'yan patmut'yunits'. Sharakanneri masin. – «Ararat», № 7–8, ej 720–732, № 9, ej 823–836, № 10–11, ej 1002–1028, № 12, ej 1146–1162 (In Armenian).

Abeghean M. 1916, S. Grigor Narekats'i.– «Azgagrakan handes» (T'iflis), girk' XXVI, ej 85–136 (In Armenian).

Abeghyan M.1923, Hamarotut'yun hay zhoghovrdakan vepi yev hin grakanut'yan patmut'yan (dasynt'ats' Yerevani zhogh. hamalsarani 1921–1922 chem. tarva), Yerevan, Pethrat, (A–B)+68 ej (In Armenian).

Abeghyan M.1934, «Shahnamayi» votanavori ch'ap'y hay banasteghtsut'yan mej. – Firdusi. banasteghtsi tsnndyan hazaramyakin nvirvats zhoghovatsu, Yerevan, Pethrat, ej 117–128 (In Armenian).

Abeghyan M. 1935, Hayots' mijnadaryan araknery yev sots'ialakan haraberut'yunnery nrants' mej. – «HSKHH kulturayi patmut'yan instituti ashkhatut'yunner», h.1, ej 5–52 (In Armenian).

Abeghyan M. 1940, Gusanakan zhoghovrdakan tagher, hayrenner yev antuniner (urakhut'yan, siro, harsanik'i, ororots'i, lats'i), Yerevan, Armfani hrat., 340 ej (In Armenian).

Abeghyan M. 1941a, Mesrop Mashtots'y yev hay gri u grakanut'yan skizby.– «Sovetakan grakanut'yun», Yerevan, № 1, ej 47–51, № 2, ej 41–51.

Abeghyan M. 1941b, Veratsnut'yuny hay hin grakanut'yan mej.– «SSRRM git.akad. Hayk.filiali Teghekagir», № 5–6, ej 85–106 (In Armenian).

Abeghyan M.1943, Kyank'i yev ashkharhayets'ut'yan p'vop'vokhut'yuny 10-rd dari verjerum yev 11-rd dari skzbnerum ibrev himk' hayots' hin grakanut'yan veratsnut'yan shrjani.– «SSRRM git.akad. Hayk. filiali Teghekagir, hasarak. gitut'yunner», № 1, ej 39–52 (In Armenian).

Abeghyan M. 1944a, Hovhannes Sarkavag vardapet.– «HSSRR GA hasarak. git.Teghekagir», № 1–2, ej 31–60 (In Armenian).

Abeghyan M. 1944b, Hayots' hin grakanut'yan patmut'yun, girk' I, Skzbits' minch'ev X dar, Yerevan, HSSRR GA hrat., 647 ej (In Armenian).

Abeghyan M. 1946, Hayots' hin grakanut'yan patmut'yun. girk' II, XI–XIX dari 30-akan t't'., Yerevan, HSSRR GA hrat., 599 ej (In Armenian).

Abeghyan M. 1966, Yerker, h. A, hatori khmbagrut'yuny, nakhabany yev tsanot'agrut'yunnery A. Ghanalanyani, Yerevan, HSSH GA hrat., (A–ID)+571 ej (In Armenian).

Abeghyan M. 1967, Yerker, h. B, hatory kazmets' yev khmbagrets' A.Ghanalanyan, Yerevan, HSSH GA hrat., 388 ej (In Armenian).

Abeghyan M. 1968, Yerker, h.G, hatory hratarakut'yan patrastets' yev khmbagrets' Em. Pivazyany, Yerevan, HSSH GA hrat., 694 ej (In Armenian).

Abeghyan M. 1970, Yerker, h. D, hatory hratarakut'yan patrastets' yev khmbagrets' Em. Pivazyany, Yerevan, HSSH GA hrat., 635 ej (In Armenian).

Abeghyan M.1971, Yerker, h.Ye, tek'sty patrastets', Ye. Bastrmajyan, hatori khmbagrut'yuny yev tsanot'agrut'yunnery Ed. Jrbashyani, Yerevan, HSSH GA hrat., 512 ej (In Armenian).

Abeghyan M. 1974, Yerker, h. Z, hatory tpagrut'yan patrastets' yev tsanot'agrets' P. Sharabkhanyan, Yerevan, HSSH GA hrat., 848 ej (In Armenian).

Պատմավիպասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Abeghyan M. 1975, Yerker, h. E, hatory kazmets', khmbagrets' yev tsanot'agrets' S. Harut'yunyany, Yerevan, HSSH GA hrat., 604 ej (In Armenian).

Abeghyan M. 1985, Yerker, h. Y, hatory tpagrut'yan patrastets'in, H. Abeghyan, P. Hakobyan, S. Harut'yunyan, S.Kostanyan, Yerevan, HSSH GA hrat., 672 ej (In Armenian).

Asatryan M. 2023, Hay lezvabanut'yan anzugakan kot'voghy. – Hushardzan Manuk Abeghyanin, Yerevan, YePH hrat., ej 59–61 (In Armenian).

Avdalbekyan M. 2009, Hodvatsner yev usumnasirut'yunner, Yerevan, «Gasprint» hrat., 344 ej (In Armenian).

Dolukhanyan A. 2023, Hay mijnadaryan grakanut'yan u hay banagitut'yan ch'gerazants'vats hamakargoghy. – Hushardzan Manuk Abeghyanin, Yerevan, YePH hrat., ej 215–219 (In Armenian).

Ejer Manuk Abeghyani patmahraparakakhosakan zharangut'yunits'.2013, kazm., arajabany yev tsanot'agr.` Anushavan Zak'aryani, Yerevan, «Gitut'yun» hrat., 103 ej (In Armenian).

Ghazinean A.1995, Grigor Narekats'i, banasteghtsakan aruyesty, Ant'ilias–Libanan, tparan Kat'voghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 264 ej (In Armenian).

Grots' u brots' yev Sasunts'i Davit' kam Mheri dur.1874, Tp. G.V. Sruandzteants', K. Polis, tp. Ye. M. Tntesean, 192 ej (In Armenian).

Harut'yunyan S. 1970, Manuk Abeghyan. kyank'n u gortsy, Yerevan, Haykakan SSH GA hratarakch'ut'yun, 668 ej (In Armenian).

Harut'yunyan S., Poghosyan A. 2015, Manuk Abeghyan.kensamatenagitakan aknark yev matenagitut'yun.– PBH, № 1, ej 92–127 (In Armenian).

«Horizon» (T'iflis), 17. VI. 1910 (In Armenian).

Jrbashyan A. 2023, Manuk Abeghyani dery hay taghagitut'yan mej. Abeghyani tesut'yan k'nnadatut'yuny. – Hushardzan Manuk Abeghyanin, Yerevan, YePH hrat., ej 292–305 (In Armenian).

Jrbashyan Ed. 1968, Abeghyany yev haykakan taghach'ap'ut'yan usumnasirut'yan harts'ery.– «Banber Yerevani hamalsarani», № 1, ej 80–93 (In Armenian).

«Zhoghovrdi dzayn» (T'iflis), 04, 05, 06, 14, 15, 19, 21, 28. IX. 1918, 02, 05. X. 1918 (In Armenian).

Koryun.1914, Vark' Mashtots'i, Yerevan, Haypethrat, 126 ej (In Armenian).

Koryun.1962, Zhitiye Mashtotsa, perevod SH. V. Smbatyana i K. A. Melik-Ogandzhanyana. Yerevan, Aypetrat, 164 s. (In Russian).

«Martakoch'» (T'iflis), 12, 13. I. 1924 (In Armenian).

Mnats'akanyan Ye. 2023, M. Abeghyani «Mer dprots'akan kyank'its'» hodvatsashary yev nra ardiakan hnch'eghut'yuny. – Hushardzan Manuk Abeghyanin, Yerevan, YePH hrat., ej 252–260 (In Armenian).

Movsesi Khorenats'woy Patmut'iwn Hayots'. 1913, ashkhatut'yamb` M. Abeghean yev S. Yarut'iwnean, Tp'ghis, Aragatip Mnats'akan Martiroseants'i, 560 ej (In Armenian).

«Nor-Dar» (T'iflis), 12, 13. X. 1889, 28. XI. 1889, 08, 09. XII. 1889,14. VI. 1891, 31. I. 1906, 02, 03, 04, 05, 07, 08. II. 1906 (In Armenian).

Nersisyan V. 1990, Manuk Abeghyany yev hayots' hin grakanut'yan azgayin yurahatkut'yan harts'y.– PBH, № 1, ej 88–94 (In Armenian).

Sarinyan S.1988, Hayots' grakanut'yan yerku dary, girk' arajin, Yerevan, «Sovetakan grogh», 536 ej (In Armenian).

Sarinyan S.2004, Hayots' grakanut'yan yerku dary, Girk' ch'orrord, Yerevan, «Tigran Mets» hrat., 636 ej (In Armenian).

Zak'aryan A. 2012, Manuk Abeghyani ushagrav hodvatsy.– PBH, № 2, ej 240–245 (In Armenian).

Zak'aryan A. 2013, Manuk Abeghyany hay-vrats'akan haraberutyunneri masin. – PBH, № 1, ej 197–217(In Armenian).

Zak'aryan A. 2013, Manuk Abeghyani yeluyt'y gitut'yunneri akademiayi himnadrmany nvirvats handisavor nistum.– PBH, № 2, ej 3–12 (In Armenian).

## ВЫДАЮЩИЙСЯ АРМЕНОВЕД МАНУК АБЕГЯН У ИСТОКОВ АКАДЕМИЧЕСКОЙ НАУКИ

ЭРИКНАЗ ВОРСКАНЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Манук Абегян, педагог, национально-общественный деятель, арменовед, орфографические реформы, просодия, теория, методология.*

Одним из видных представителей армянской филологии является доктор философских наук, доктор социологических наук, заслуженный деятель науки, академик АН Армении Манук Абегян (1885–1944).

Исследования М. Абегяна имели фундаментальное значение в нескольких отраслях арменоведения: в филологии, литературоведении, языкознании. Он заложил основу научного изучения просодии.

М. Абегян был истинным интеллигентом и ученым-гражданином, отличавшимся честностью и принципиальностью, скрупулезностью в достижениям научной объективности. Ученый обладал глубокими знаниями истории армянского народа, истории мировой литературы, литературных школ и направлений. Вся его деятельность являла собой образец беззаветного служения родине и своему народу.

*Эрикназ Ворсканян – к. филол. н., директор Института литературы им. М. Абегяна НАН РА, заведующая отделом древней и средневековой армянской литературы. Научные интересы: древняя и средневековая армянская литература, армянская классическая литература. Автор 1 монографии и 35 статей.*
*ORCID: 0000-0001-6682-4043. vorskanyan@litinst.sci.am*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

# PROMINENT ARMENOLOGIST MANUK ABEGHYAN AT THE ORIGINS OF THE ACADEMIC SCIENCE

HERIKNAZ VORSKANYAN

Summary

*Keywords: Manuk Abeghyan, pedagogue, national-public figure, Armenologist, orthographic reforms, prosody, theory, methodology.*

One of the outstanding representatives of the Armenian philology is Manuk Abeghyan (1885–1944), Doctor of Philosophy, Doctor of Social Sciences, Honored Scientist, Academician of the Academy of Sciences of Armenia.

M. Abeghyan's research works were of fundamental importance in several branches of Armenology, i.e. philology, literary studies, linguistics. He laid the foundation for the scientific study of prosody.

M. Abeghyan was a true intellectual, scientist and citizen, distinguished by honesty, adherence to his principles. He was scrupulous in achieving scientific objectivity. The scientist had deep knowledge of the history of Armenian people, history of world literature, literary schools and directions. All his activities were an example of selfless devotion to his homeland and people.

*Heriknaz Vorskanyan – Ph. D. of Philological Sciences, Director of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA, Head of the Department of Ancient and Medieval Armenian Literature. Scientific interests: ancient and medieval Armenian literature, Armenian classical literature. Author of 1 monograph and 35 articles.*
*ORCID: 0000-0001-6682-4043. vorskanyan@litinst.sci.am*

ՀՏԴ : 929:891.981.09 Աղբալյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-101

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

# ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Բանալի բառեր՝ Նիկոլ Աղբալյան, Թիֆլիս, Սայաթ-Նովա, հայ միջնադարյան գրականություն, գրականագիտություն, Հայաստանի առաջին Հանրապետություն, նախարար, տարագրություն, Բեյրութի Հայ ճեմարան:**

**Ամփոփում**

